ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Քաղաքացիական գործ
հա. ԵԴ2/0293/02/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ ՄԵԿ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՄԻԱՑՆԵԼՈՒ, ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ, ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24.01.2024 թվականին ք.Երևանում

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Արման Օհանյանս ուսումնասիրելով <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր կամ <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ) ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի 12.01.2024 թվականի թիվ 46-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Զ Ե Ց
II
(ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ)

17.01.2024 թվականին <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ն՝ ի դեմս ներկայացուցիչ Արմեն Բադալյանի, հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի 12.01.2024 թվականի թիվ 46-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցվորը (ներկայացուցիչը) ներկայացրել է նաև միջնորդություն՝ գործը դատական նիստում քննության առնելու մասին:

Հայցվորը (ներկայացուցիչը) ներկայացրել է հայցի ապահովման միջնորդությունը (այսուհետ նաև՝ Միջնորդություն):

19.01.2024 թվականին հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, հանձնվել է Դատարանի դատավոր Ա.Օհանյանին:

III
(ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ)

1. <u>Հայցադիմումը վարույթը ընդունելու վերաբերյալ Դատարանի իրավական դիրքորոշումը.</u>

Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և բացակայում են նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:

Դատարանն արձանագրում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է Պատասխանողից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Անդրադառնալով գործը դատական նիստում քննության առնելու մասին Հայցվորի ներկայացուցչի միջնորդությանը, Դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման՝ հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ***գործին մասնակցող անձի միջնորդությամբ*** *կամ իր նախաձեռնությամբ* ***եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում****:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Դատարանն արձանագրում է, որ ելնելով ներկայացված վեճի և հայցապահանջի բովանդակությունից, առկա է կողմերի հետ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի քննության անհրաժեշտություն, որպիսի պարագայում առկա է առնվազն մեկ դատական նիստ անցկացնելու անհրաժեշտություն:

2. <u>Քաղաքացիական գործերը մեկ վարույթում միացնելու վերաբերյալ Դատարանի իրավական դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6 հոդվածի համաձայն՝

1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

(…):

4. ***Դատարանը միևնույն գնման գործընթացին վերաբերող՝ սույն գլխով նախատեսված վեճերի վերաբերյալ իր վարույթում քննվող գործերը միացնում է մեկ վարույթում:***

5. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի համաձայն՝

(…):

4. Գործերը միացնելու կամ պահանջներն առանձին վարույթներում առանձնացնելու մասին առաջին ատյանի դատարանը կայացնում է որոշում:

Դատարանն ուսումնասիրելով հա. ԵԴ2/0293/02/24 և հա. ԵԴ2/0228/02/24 քաղաքացիական գործերի նյութերն արձանագրում է, որ Դատարանի (դատավոր՝ Ա.Օհանյանի) վարույթում է գտնվում ըստ հայցի <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի միջև կնքված թիվ <<ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/8Շ>> ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից միակողմանի լուծելու մասին 05.01.2024 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հա. ԵԴ2/0228/02/24 քաղաքացիական գործը, իսկ սույն քաղաքացիական գործի շրջանակներում վիճարկվում է <<ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/8Շ>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջնակներում <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի 12.01.2024 թվականի թիվ 46-Ա հրամանի իրավաչափությունը:

Նման պայմաններում Դատարանն արձանագրում է, որ միևնույն գնման գործընթացին՝ <<ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/8Շ>> ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով նախատեսված վեճերի վերաբերյալ Դատարանի դատավոր Ա.Օհանյանի վարույթում առկա է երկու քաղաքացիական գործ, հետևաբար Դատարանը գտնում է, որ ***սույն՝ հա. ԵԴ2/0293/02/24 քաղաքացիական գործը և հա. ԵԴ2/0228/02/24 քաղաքացիական գործը պետք է միացնել մեկ վարույթում:***

Միաժամանակ, <<ՀՀ դատարանների գործավարության կանոնները հաստատելու մասին>> ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2007թ. դեկտեմբերի 21-ի թիվ 23-Լ որոշման թիվ 1 հավելվածի 6-դ կետի 11-րդ ենթակետով սահմանվում է, որ դատական գործերի միացման դեպքում դատական գործի համար է համարվում ավելի վաղ (ավելի փոքր հեթական համար ունեցող) գրանցում ստացած գործի համարը:

Տվյալ դեպքում ըստ հայցի <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի միջև կնքված թիվ <<ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/8Շ>> ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից միակողմանի լուծելու մասին 05.01.2024 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջը և ըստ հայցի <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի 12.01.2024 թվականի թիվ 46-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջը պետք է քննել հա. ԵԴ2/0228/02/24 քաղաքացական գործի համարի տակ:

3. <u>Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ Դատարանի իրավական դիրքորոշումը:</u>

17.01.2024 թվականին Դատարան ներկայացված հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ գրավոր միջնորդությամբ Հայցվորի ներկայացուցիչը, հայտնել է. **(Մեջբերման սկիզբ)**

<<Հայտնում ենք, որ սույն հայցադիմումով վիճարկվող որոշման հիմքում դրվել է ՍՊԸ-ի Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտումը, այն է՝ Պայմանագրի 3.1.4 կետի դ) ենթակետը, որի համաձայն՝ Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով

նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհապույց վերացման ողջամիտ ժամկետները:

Վիճարկվող որոշմամբ արձանագրված վերոհիշյալ խախտման հիմքով Հայցվորի համար առաջացել է <<ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/8Շ>> ծածկագրով գնման պայմանագրի կատարման ապահովման գումարների գանձման վտանգ:

Մասնավորապես, Դատարանին տեղեկացնում ենք նաև, որ <<ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/8Շ>> ծածկագրով գնման պայմանագիր կնքելիս՝ հայցվորի կողմից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանն է ներկայացվել <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ի կողմից տրամադրված պայմանագրի ապահովումը՝ բանկայնին երաշխիքի ձևով /Երաշխիք NԲԲԵՆ21/231-01/ (կցվում է):

Պատվիրատուի Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին 05.01.2024թ. թիվ ԱԵ//40491-2023 որոշմամբ <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ից պահանջել է վճարել <<ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/8Շ>> ծածկագրով գնման պայմանագրի կատարման ապահովման գումարները, այն է՝ 300 000 000 ՀՀ դրամը:

Հաշվի առնելով վերոգրյալը, <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ն ներկայացնում է սույն հայցի ապահովման միջնորդություն, հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն՝ (…):

ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն՝ (…):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (…):

ՀՀ Դատական օրենսգիրք Սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ (…):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (…):

Նույն օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ (…):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշմամբ անդրադառնալով հայցի ապահովման դատավարական ինստիտուտին նշել է, որ հայցի ապահովումն օրենսդրությամբ նախատեսված՝ անձանց իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիքներից մեկն է: Այն ուղղված է անձանց խախտված գույքային իրավունքների իրական ու ամբողջ ծավալով վերականգնելուն: Հայցի ապահովման ինստիտուտի նշանակությունը կայանում է նրանում, որ դրանով պաշտպանվում են հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ, կամ երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել դատական ակտի կատարումը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է հայցի ապահովման դատավարական ինստիտուտի սահմանման օրենսդրական նպատակին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածից հետևում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը:

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է, որ հայցի ապահովման դատավարական ինստիտուտը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել ու հայցվորի (ապագա հնարավոր պահանջատիրոջ) իրավունքները և օրինական շահերը: Հաշվի առնելով հայցի ապահովման դատավարական ինստիտուտի նպատակը՝ օրենսդիրը սահմանել է, որ հայցը բավարարելու մասին

վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը, ինչը դատական ակտի կատարման կարևորագույն երաշխիք է:

Վկայակոչված նորմերի իրավակարգավորումներից հետևում է, որ օրենսդիրը հայցի ապահովման միջոց կիրառելու համար նախատեսել է, որ միջնորդությունը պետք է պարունակի հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքի առկայության վերաբերյալ հիմնավորումներ և նշում հայցի ապահովման միջոցի կամ միջոցների մասին և դատավարության մասնակիցների համար չի սահմանել դատավարական պարտականություն ապացույցներ ներկայացնելու՝ ներկայացված միջնորդության հիմքի վերաբերյալ:

Գտնում ենք, որ սույն միջնորդությունը չբավարարելը էական վնաս կհասցնի սույն հայցի ապահովման միջնորդությունը ներկայացնող <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ին հետևյալ հիմնավորմամբ.

Դատարանի ուշադրությունն ենք հրավիրում այն կարևոր հանգամանքի վրա, որ վիճարկվող որոշմամբ արձանագրված խախտման հետևանքով փաստացիորեն ՍՊԸ-ն ոչ իրավաչափորեն կանգնել է որպես պայմանագրի ապահովում տրամադրած 300 000 000 ՀՀ դրամի չափով գումարը գանձվելու վտանգի առջև:

Փաստորեն, սույն միջնորդությունը չբավարարելը էական վնաս կհասցնի սույն հայցի ապահովման միջնորդությունը ներկայացնող <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ին, ավելին, ՍՊԸ-ին կկանգնեցի ծանր տնտեսական խնդիրների առջև: Բացի այդ, այս փուլում վերոհիշյալ գումարների գանձումը ՍՊԸ-ից նաև կխոչընդոտի վերջինիս կողմից արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրականացմանը՝ համապատասխան դատական ծախսերը հոգալու դժվարության տեսանկյունից:

Հարկ է նկատել, որ վիճարկվող որոշումը դադարեցվելու դեպքում կհամարվի, որ դատական քննության ընթացքում հայցվորի իրավունքը խախտված է եղել (որոշումը անվավեր է կայացման պահից), սակայն անհնարին կլինի վերացվեն նշված ժամկետում Ընկերության իրավունքի խախտումը: Գտնում ենք, որ նման իրավիճակներից խուսափելու և Հայցվորին էական վնաս հասցնելուց խուսափելու համար համար անհրաժեշտ է կիրառել ներկայացված միջնորդությունը:

Նշենք նաև, որ առանց համապատասխան հայցի ապահովման միջոց կիրառելու պրակտիկայում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ ներկայացված հայցադիմումը դատարանի կողմից բավարարվի և ուժի մեջ մտնի այն ժամկետում, երբ ՍՊԸ-ից արդեն գանձված լինեն համապատասխան գումարները, ինչը վերջինիս կխոչընդոտի դատավարության ողջ քննության ընթացքում համապատասխան ֆինանսական միջոցներ ունենալու և արդյունավետ տնտեսական գործունեություն իրականցնելու հնարավորությունից: Արդյունքում ՍՊԸ-ին հասցրած և կրած վնասը կլինի ակնհայտ: Միևնույն ժամանակ Հայցվորը սույն գործի դատական քննության փուլում համապատասխան ֆինանսական միջոցներից զրկվելու պարագայում չի կարողանա օգտվել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացնելու հնարավորությունից՝ համապատասխան ֆինանսների բացակայության պայմաններում:

Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ պայմանագրի ապահովման գումարի գանձումը, այն է՝ 300 000 000 ՀՀ դրամը, ընկերությանը իրականում կկանգնեցնի լուրջ ֆինանսական խնդիրների առջև և դատավարության ընթացքում վերջինս կզրկի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից օգտվելու հնարավորությունից՝ ֆինանսական համապատասխան միջոցներ չունենալու պայմաններում:

Վերոհիշյալը վկայում է, որ սույն միջնորդությունը չբավարարելը էական վնաս կհասցնի սույն հայցի ապահովման միջնորդությունը ներկայացնող <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ին:

(...):

Դատարանին տեղեկացնում ենք, որ նույնաբովանդակ հայցի ապահովման միջնորդությունները անթիվ են և որպես օրինակ ներկայացվում է թիվ ԵԴ2/26082/02/23 և թիվ ԵԴ2/26203/02/23 քաղաքացիական գործերով Դատարանի կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումների պատճենները:

Ելնելով վերոգրյալից՝ Դատարանին

ՄԻՋՆՈՐԴՈՒՄ ԵՆՔ՝

1. Արգելել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը կատարել որևէ գործողություն, որը բխում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի միջև կնքված թիվ <<ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/8Շ>> ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից միակողմանի լուծելուց՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

2. Արգելել <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ին վճարել՝ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/8Շ ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 02.08.2021թ. տրամադրված թիվ NPԲԵՆ21/231-01 բանկային երաշխիքով՝ ներկայացված որպես պայմանագրի ապահովման գումար՝ 300 000 000 ՀՀ դրամը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:>>: **(Մեջբերման ավարտ):**

Դատարանն, ուսումնասիրելով հա. ԵԴ2/0293/02/24 և հա. ԵԴ2/0228/02/24 քաղաքացիական գործերով ներկայացված Հայցվորի՝ ***<u>Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ</u>*** միջնորդություններն, արձանագրում է, որ դրանք ներկայացվել են նույն փաստական հիմքերով, իսկ հա. ԵԴ2/0228/02/24 քաղաքացիական գործով ներկայացված հայցի ապահովման միջնորդությունը բավարարվել է:

Տվյալ դեպքում սույն քաղաքացիական գործը պետք է միացվի հա. ԵԴ2/0228/02/24 քաղաքացիական գործին և ենթակա է քննության հա. ԵԴ2/0228/02/24 քաղաքացիական գործի համարի տակ, իսկ տվյալ դեպքում հա. ԵԴ2/0228/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում 23.01.2024 թվականին Դատարանի կողմից կայացված <<Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին>> որոշմամբ բավարարվել է Հայցվորի միջնորդությունը և Դատարանը որոշել է.

<<1.1. Արգելել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը կատարել որևէ գործողություն, որը բխում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի միջև կնքված թիվ <<ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/8Շ>> ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից միակողմանի լուծելուց՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

1.2. Արգելել <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ին վճարել՝ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/8Շ ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 02.08.2021թ. տրամադրված թիվ NPԲԵՆ21/231-01 բանկային երաշխիքով՝ ներկայացված որպես պայմանագրի ապահովման գումար՝ 300 000 000 ՀՀ դրամը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: >>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի համաձայն՝

(…):

6. Նույն հիմքով միջնորդություն կրկին ներկայացնելն արգելվում է: Նախկինում մերժված միջնորդությունը նույն հիմքով ներկայացվելու դեպքում չի քննարկվում:

(…):

Ամփոփելով վերոգրյալը և հիմք ընդունելով այն հանագամանքը, որ սույն քաղաքացիական գործը պետք է միացվի հա. ԵԴ2/0228/02/24 քաղաքացիական գործին և ենթակա է քննության հա.

ԵԴ2/0228/02/24 քաղաքացիական գործի համարի տակ, իսկ հա. ԵԴ2/0228/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում նույն հիմքով ներկայացված հայցի ապահման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդության վերաբերյալ արդեն իսկ առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, հետևաբար՝ ***ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով*** հայցվոր <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արմեն Բաղալյանի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին, ենթակա է մերժել:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 234.5, 234.6, 234.9,123 և 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Պատասխանող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից պահանջել <<ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/8Շ>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. **Պարզաբանել կողմերին, որ՝**

- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.
- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:
- հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Գործի քննությունն իրականացնել դատական նիստով, որը տեղի կունենա 22.02.2024 թվականին՝ ժամը 16:30-ին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Էրեբունու նստավայրի (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մ.Խորենացի 162Ա) դատական նիստերի թիվ 7 դահլիճում:

5. Ըստ հայցի <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի միջև կնքված թիվ <<ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/8Շ>> ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից միակողմանի լուծելու մասին 05.01.2024 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին ***հա. ԵԴ2/0228/02/24*** քաղաքացիական գործը և ըստ հայցի <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի 12.01.2024 թվականի թիվ 46-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին հա. ***ԵԴ2/0293/02/24*** քաղաքացիական գործը միացնել մեկ վարույթում և ***քննել հա. ԵԴ2/0228/02/24 քաղաքացական գործի համարի տակ***:

6. Հա. ԵԴ2/0293/02/24 քաղաքացիական գործով հայցվոր <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արմեն Բաղալյանի միջնորդությունը հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին, մերժել:

7. Որոշումը՝ <<Եզրափակիչ>> մասի 6-րդ կետի մասով կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հայցվորի կողմից այն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, իսկ մնացած մասով՝ սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Digitally signed by OHANYAN ARMAN 4014820192 Date: 2024.01.25 14:42:37 AMT **Ա. ՕՀԱՆՅԱՆ**